

ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

ԵՄ-ի ռազմավարական շահերը Հարավային Կովկասում. անտեսումից՝ ռազմավարական հետաքրքրություն

ՆՈՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարան

Ստացված է 17.04.2015

Ընդունված է 21.08.2015

Հոդվածում քննարկվում են 2000-ական թվականների սկզբից ԵՄ-ի քաղաքական օրակարգում Հարավային Կովկասի ձեռք բերած մեծ կարևորության ներքին և արտաքին պատճառները: Ուսումնասիրվում են նաև Հարավային Կովկասի առնչությամբ ԵՄ-ի ռազմավարական շահերի վերանայման առաջնային շարժառիթները, որոնք սկզբնական շրջանում անտեսված էին: Եվրոպական էներգետիկ անվտանգության խնդիրների ուսումնասիրության շրջանակներում քննարկվում է Հարավային Կովկասի դերը՝ որպես ԵՄ զագի ներկրման աղբյուրների և երթուղիների բազմազանեցման ռազմավարության մեջ հավանական էներգամատակարար և տարանցիկ երթուղի: Դա իրականացվել է «Հարավային զագային միջանցք» նախագծի հիման վրա: Էներգետիկ հետաքրքրություններից գատ քննարկվում են նաև ԵՄ-ի ռազմավարական հետաքրքրությունները անվտանգության, առևտրի և արդյունավետ կառավարման ոլորտներում:

Բանալի բառեր

Եվրոպական միություն, Հարավային Կովկաս, ԵՄ-ի ռազմավարական հետաքրքրություններ, էներգետիկ հետաքրքրություններ, անվտանգության խնդիրներ, արդյունավետ կառավարում:

Նախաբան

Խորհրդային Միության կազմալուծումը հանգեցրեց երկրներ համակարգի փլուզմանը, որի արդյունքում Հարավային Կովկասում արձանագրվեց աշխարհաքաղաքական իրավիճակի արմատական փոփոխություն, դրա հետևանքով՝ նոր ազդեցիկ դերակատարների ներգրավվածություն, ինչպես նաև տարածաշրջանային և արտատարածաշրջանային դերակատարների և հարավկովկասյան

երկրների միջև նոր հարաբերությունների ձևավորում: Այդուհանդերձ, ԽՍՀՄ փլուզմանը հաջորդած առաջին տասնամյակում Հարավային Կովկասը կարևոր տեղ չէր զբաղեցնում ԵՄ-ի գիտակցված հետաքրքրությունների շրջանակում: Ակնհայտորեն, տարածաշրջանի նկատմամբ ԵՄ-ի ուղղակի քաղաքական հետաքրքրության բացակայությունն ուներ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պատճառներ:

Դ. Լինչը պարզորոշ ներկայացնում է Հարավային Կովկասում ԵՄ-ի քաղաքականության մեկնարկը: 1990-ական թվականների վերջին Հարավային Կովկասի ակնհայտ անտեսումը հեղինակը կապում է տարածաշրջանի հեռավոր աշխարհագրական դիրքի հետ: Ինչպես անվտանգության, այնպես էլ հարևանության ծրագրերում մինչ ԵՄ-ի վերջին ընդլայնումները տարածաշրջանը չէր դիտարկվում որպես Եվրոպայի մաս, այլ որպես եվրոպական նախաձեռնությունների աշխարհագրական շրջանակներից դուրս գտնվող տարածաշրջան: Այդ ժամանակաշրջանում ԵՄ-ի վարած պասիվ քաղաքականության հիմնական պատճառների շարքում հեղինակն ընդգծում է տարածաշրջանի և տարածաշրջանային ինքնության վերաբերյալ տեղեկությունների պակասը (որը տարածաշրջանի վերաբերյալ մշակված ռազմավարական մտածողության բացակայության պատճառ դարձավ), տարածաշրջանային խնդիրների խճճվածությունը, ԵՄ-ի ներսում Հարավային Կովկասի նկատմամբ հետաքրքրությունը խթանող լոբբիստական խմբերի պակասը, ինչպես նաև տարածաշրջանում արտաքին դերակատարների գերիշխող ներկայությունը¹:

Միաժամանակ, ԵՄ-ի ներսում ներքին ինստիտուցիոնալ էական բարեփոխումները և տնտեսական դժվարությունները՝ կապված Մասսաթրիխտի դաշնագրի հետ, ինչպես նաև եվրոպական ընդհանուր արտաքին և անվտանգության հստակ քաղաքականության բացակայությունը զգալիորեն խոչընդոտում էին տարածաշրջանում

¹ **Lynch D.**, The EU: Toward A Strategy, *The South Caucasus: A Challenge for the EU*, Chaillot Paper no. 65, EU Institute for Security Studies (Ed. by D. Lynch), Paris, 2003, pp. 171-192.

ԵՄ-ի ավելի ակտիվ քաղաքականության իրականացմանը²: Ն. Պոպեսկուն նշում է, որ մինչև 1999 թվականը, երբ սահմանվեց Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության հարցերով ԵՄ բարձրագույն ներկայացուցչի պաշտոն, ԵՄ-ը չունեի արտաքին քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ կապակցված ինստիտուցիոնալ շրջանակներ³: Ի հավելումն, Լ. Սիմանոն պնդում է, որ այդ ժամանակաշրջանում հարավկովկասյան երկրների հետ ԵՄ-ի քաղաքական հարաբերությունների հաստատմանը խոչընդոտում էին նաև ԵՄ-ի՝ «նախ՝ Ռուսաստանը» ռազմավարությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ հետխորհրդային տարածքում արտաքին քաղաքականության ձևավորման ժամանակ Մոսկվան շարունակում էր լինել արտոնյալ գործընկեր եվրոպական առաջնորդների համար⁴: Տարածաշրջանում ԵՄ-ի ներգրավվածությունը խոչընդոտող արտաքին գործոնների շարքում հարկ է նաև նշել Բալկաններում առկա հակամարտությունները, ինչպես նաև լուրջ ճգնաժամերի կառավարման գործում անդամ երկրների արագ և միասնաբար արձագանքելու վերաբերյալ համաձայնության բացակայությունը⁵:

Այդուհանդերձ, 2003 թվականից սկսած Հարավային Կովկասը հայտնվեց ԵՄ-ը ուշադրության կենտրոնում: Դիտարկման պատիվ շրջանից հետո ԵՄ-ը հռչակեց իր հստակ սահմանված հետաքրքրություններն այդ տարածաշրջանում: Դ. Լինչը ԵՄ քաղաքականության մեջ արձանագրված այդ փոփոխությունը՝ սեփական հետաքրքրությունների հստակեցում և հստակ տարածաշրջանային ռազմավարության մշակում, մեկնաբանում է ԵՄ արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցած զգալի փոփոխությամբ (ինչը նախկինում պայմանավորվում էր ԵՄ-ին անդամակցելու/չանդամակցելու

² **Sierra O.**, Life is a dream: EU governance in the Southern Caucasus, *Dynamiques internationales*. Numero 6, Fevrier 2012, available at <http://dynamiques-internationales.com/wp-content/uploads/2012/02/D16-Sierra11.pdf>

³ **Popescu N.**, ENP and EaP: relevant for the South Caucasus? *South Caucasus – 20 Years of Independence*. Friedrich-Ebert-Stiftung, pp. 316-335.

⁴ **Simão L.**, EU-South Caucasus Relations: Do Good Governance and Security Go Together?, *Political Perspective*, 5 (2), 2011, 33-57.

⁵ **Cornell S. and Starr F.**, The Caucasus: A challenge for Europe. Central Asia-Caucasus Institute. Silk Road Program, 2006, p. 11.

սխեմայով) և աշխարհում, մասնավորապես՝ Հարավային Կովկասում, ավելի ակտիվ քաղաքական դերակատարություն ունենալու նկրտումներով⁶: Ըստ Ս. Քորնելի և Ֆ. Սթարի, Հարավային Կովկասի նկատմամբ ԵՄ-ի դիրքորոշման փոփոխությունը կապված էր նաև համաշխարհային զարգացումներում Կովկասի աճող աշխարհաքաղաքական կարևորության հետ: Դրան հաջորդեցին արևելյան ուղղությամբ ԵՄ-ի ընդլայնումը, ինչպես նաև Կովկասում ԵՄ-ի փոխկապակցված հետաքրքրությունների ի հայտ գալը կառավարման, էներգետիկայի և անվտանգության ոլորտներում⁷:

Հոդվածի գլխավոր նպատակն է ուսումնասիրել ԵՄ-ի քաղաքական օրակարգում Հարավային Կովկասի ձեռք բերած մեծ կարևորության, ինչպես նաև տարածաշրջանում սեփական ռազմավարական հետաքրքրությունների գիտակցման հիմնական ներքին և արտաքին պատճառներն ու շարժառիթները: Եվրոպական էներգետիկ անվտանգության խնդիրների՝ Հարավային Կովկասի համար ունեցած հետևանքների ուսումնասիրության շրջանակներում կվերլուծվի տարածաշրջանի՝ որպես հավանական էներգամատակարարի և տարանցիկ երթուղու, դերը ԵՄ-ի՝ գազի ներկրման երթուղիների բազմազանեցման ռազմավարության մեջ: Դա կներկայացվի «Հարավային գազային միջանցք» նախագծի հիման վրա: Էներգետիկ հետաքրքրություններից բացի կքննարկվեն նաև ԵՄ-ի ռազմավարական հետաքրքրություններն անվտանգության, առևտրի և լավ կառավարման ոլորտներում:

Էներգետիկ հետաքրքրություններ

Եվրոպական էներգետիկ խնդիրներ. ներկրման երթուղիների բազմազանեցում և էներգետիկ անվտանգության ռազմավարություն: Եվրոպական համայնքի ստեղծման պահից սկսած էներգետիկ խնդիրները ձեռք են բերել առանցքային նշանակություն: 1957 թվականին Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Բենիլյուքսի

⁶ Lynch D., ..., pp. 173-174.

⁷ Cornell S. and Starr F., ..., pp. 11-15.

երկրների միջև Եվրոպական ածխի և պողպատի համայնքի և Եվրատոմի ստեղծման մասին պայմանագրերի կնքումից ի վեր էներգետիկ անվտանգության հարցերը շարունակում էին մնալ վճռորոշ ԵՄ-ի տնտեսական, քաղաքական և անվտանգության հարցերի օրակարգում՝ ինչպես համաշխարհային, այնպես էլ տարածաշրջանային մակարդակներում: Միաժամանակ, ԵՄ անդամ զգալի թվով երկրներ և ընդհանուր առմամբ ԵՄ-ը չունեն նավթի, բնական գազի և ածխի զգալի պաշարներ՝ աճող տնտեսական պահանջները բավարարելու համար:

Սահմանափակ ներքին էներգետիկ պաշարների պատճառով ԵՄ-ը մեծապես կախված է արտաքին էներգամատակարարումից: Ներկայումս ԵՄ-ը գազի և նավթի ամենախոշոր ներկրողներից է: Հիմնական մատակարար երկրներն են Ռուսաստանը, Նորվեգիան, Պարսից ծոցի տարածաշրջանի և Հյուսիսային Աֆրիկայի երկրները⁸: ԵՄ 28 անդամ երկրներում օգտագործվող հանածո վառելիքի գրեթե 50 տոկոսը ներկրվում է ոչ ԵՄ անդամ երկրներից, և այդ հարաբերակցությունն ունի աճի միտում: Պաշտոնական տվյալների համաձայն ԵՄ-ի վերջին ընդլայնումներից հետո կախվածությունը էներգամատակարարումից աճել է էլեկտրաէներգիայի սպառման ընդհանուր ծավալի ոչ ավելի քան 40 տոկոսից (1980-ական թվականներ)՝ հասնելով 53.2 տոկոսի (2013 թվական)⁹: Ըստ Եվրոպական հանձնաժողովի, 2015 թվականի տվյալների, ԵՄ-ը ներկրում է ծախսած էլեկտրաէներգիայի 53 տոկոսը¹⁰: Չնայած ԵՄ-ը հանձն է առել մինչև 2030 թվականը օգտագործել էլեկտրաէներգիայի համաշխարհային սպառման ծավալների 10 տոկոսից պակաս՝ Նոր Եվրոպական էներգետիկ քաղաքականության կիրառման շնորհիվ, այդուհանդերձ ներկայումս նկատվում է միանգամայն հակառակ միտում: Ըստ Եվրոպական հանձնաժողովի, էլեկտրաէներգիայի

⁸ **Jimenez A.**, Statistical aspects of the natural gas economy in 2009. (Eurostat Data in focus 20/2010); available at http://epp.eurostat.ec.europa.eu/cache/ITY_OFFPUB/KS-QA-10-00/EN/KS-QA-10-020-EN.PDF.

⁹ Energy production and imports, available at http://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/Energy_production_and_imports

¹⁰ European Commission. Energy Union Factsheet. Brussels, 25 February 2015, available at http://europa.eu/rapid/press-release_MEMO-15-4485_en.htm

ներկրումից ԵՄ-ի կախվածությունը կմեծանա՝ էլեկտրաէներգիայի ընդհանուր սպառման ծավալների ներկայիս 50 տոկոսից 2030 թվականին հասնելով 65 տոկոսի: Քանզի ԵՄ-ի ներքին էներգետիկ արտադրության մակարդակը շարունակում է նվազել, ակնկալվում է, որ գազի ներկրման ծավալները կավելանան՝ ներկայիս 57 տոկոսից հասնելով 84 տոկոսի մինչև 2030 թվականը, իսկ նավթի ծավալները համապատասխանաբար՝ 82 տոկոսից 93 տոկոսի¹¹: Ուստի, մոտ ապագայում ԵՄ-ը կշարունակի զգալիորեն կախված լինել էներգակիրների ներկրումից, շուկայական պայմաններից, աշխարհաքաղաքական գործոններից և արտադրող ու տարանցիկ երկրների քաղաքական կայունությունից:

Ինչպես արդեն նշվել է, Ռուսաստանը հում նավթի, բնական գազի և կոշտ վառելիքի ԵՄ-ի ամենախոշոր մատակարարներից է: Ըստ Եվրոստատի տվյալների, 2013 թվականին ԵՄ 28 երկրներին մատակարարվող կոշտ վառելիքի պաշարների ռուսական մասնաբաժինը կազմում էր 28.8 տոկոս, հում նավթի մասնաբաժինը՝ 33.5 տոկոս, բնական գազի մասնաբաժինը՝ 39.3 տոկոս¹²: Ավելին, ռուսական գազամատակարարումներից Եվրոպայի կախվածությունն ունի աճի միտում: Փորձագետները պնդում են, որ պահանջարկի արագ աճի պայմաններում Ռուսաստանից եվրոպական երկրների գազի ներկրումների ընդհանուր ծավալը մինչև 2020թվականը կավելանա՝ հասնելով 60 տոկոսի¹³:

Անկասկած, սահմանափակ թվով գործընկերների ձեռքում կենտրոնացած հանածո վառելիքի պաշարների նման մեծ չափաբաժինը կարող է վտանգել ԵՄ-ի էներգետիկ մատակարարումների անվտանգությունը, մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վեց անդամ երկրներ կախված են մեկ արտաքին գազամատակարարից: Արդյունքում, այդ երկրները մատակարարման ընդհատում-

¹¹ European Commission. An Energy Policy for Europe, available at http://ec.europa.eu/energy/energy_policy/doc/01_energy_policy_for_europe_en.pdf

¹² Energy production ...

¹³ **Paillard C.-A.**, Rethinking Russia: Russia and Europe's Mutual Energy Dependence, *Journal of International Affairs*, **65**, 2, 2010, available at <http://jia.sipa.columbia.edu/russia-and-europe%E2%80%99s-mutual-energy-dependence>

ների տեսանկյունից դառնում են առանձնահատուկ խոցելի¹⁴: Ուստի, էներգամատակարարման երթուղիների բազմազանեցումը դարձել է օրակարգային խնդիր ԵՄ-ի համար:

Ռուսաստանից էներգամատակարարումների անվտանգության վերաբերյալ մտահոգություններն ի հայտ եկան հատկապես 2005-2006 թվականների ձմռանը ռուսական գազի մատակարարումների ընդհատումների պատճառով՝ պայմանավորված ռուս-ուկրաինական գազային ճգնաժամով¹⁵: Չնայած խնդիրը լուծվեց արդեն հունվարի սկզբին՝ ռուս-ուկրաինական նոր համաձայնագրի կնքմամբ, այդուհանդերձ ԵՄ-ի պաշտոնական ներկայացուցիչները կասկածի տակ էին առնում Ռուսաստանից Եվրոպա էներգամատակարարումների գործող համակարգի հուսալիությունը:

Ի պատասխան ԵՄ-ի՝ հանածո վառելիքի ներկրումներից ունեցած կախվածության վերաբերյալ շարունակական մտահոգությունների, 2006 թվականի մարտին Եվրոպական հանձնաժողովը հրապարակեց մի զեկույց, որը պարունակում էր էներգետիկ պաշարների ներկրումից Եվրոպայի աճող կախվածության վերաբերյալ լուրջ ահանգստություն: Զեկույցում առաջարկվում էր հստակ և հետևողական քաղաքականություն՝ ուղղված էներգակիրների մատակարարումների ապահովմանն ու բազմազանեցմանը՝ նոր խողովակաշարերի կառուցման միջոցով: Ըստ Եվրոպական հանձնաժողովի, «ԵՄ-ի էներգետիկ անվտանգությունը կարող է մեծանալ էներգառեսուրսների աղբյուրների, աշխարհագրական ծագման, ինչպես նաև տարանցիկ երթուղիների բազմազանեցման ճանապարհով: ԵՄ-ը պետք է դյուրացնի իր համար առանցքային նշանակություն ունեցող հարևան երկրներում գործող էներգետիկ ենթակառուցվածքի պահպանման և արդիականացման,

¹⁴ Energy Union Package. Communication from the Commission to the European Parliament, the Council, the European Economic and Social Committee, the Committee of the Regions and the European Investment Bank. Brussels, 25.2.2015 COM(2015) 80 final, available at http://eur-lex.europa.eu/resource.html?uri=cellar:1bd46c90-bdd4-11e4-bbe1-01aa75ed71a1.0001.03/DOC_1&format=PDF

¹⁵2006 թվականի հունվարին ռուսական «Գազպրոմը» որոշեց կրճատել Ուկրաինայի տարածքով բնական գազի հոսքը, ինչը հանգեցրեց դեպի մի շարք եվրոպական երկրներ (Ավստրիա, Հունգարիա, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Սլովակիա և Լեհաստան) գազամատակարարումների զգալի կրճատումների:

ինչպես նաև նոր ենթակառուցվածքի մշակման գործընթացները»¹⁶: Եվրոպական խորհրդին ուղղված իր զեկույցում ԵՄ-ի Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության հարցերով բարձրագույն ներկայացուցիչ Խավիեր Սոլանան նշում էր. «Անկայուն տարածաշրջաններից և մատակարարներից ներկրումների աճող կախվածությունը լուրջ վտանգ է ներկայացնում: Որոշ խոշոր արտադրողներ և սպառողներ էներգիան օգտագործում են որպես քաղաքական լծակ»: Ի թիվս այլ առաջարկների՝ Սոլանան ուշադրություն էր հրավիրում Կենտրոնական Ասիայում, մասնավորապես՝ Կասպից ծովի ավազանի պաշարների վրա¹⁷:

2008 թվականին Եվրոպական հանձնաժողովը նախաձեռնեց բացել չորրորդ էներգետիկ՝ «Հարավային գազային միջանցքը»¹⁸, որը պետք է ունենար երեք հիմնական խողովակաշարեր՝ «Նաբուկկո», Թուրքիա-Հունաստան-Իտալիա խողովակաշար (ITGI) և Անդրադրիատիկ գազատար (TAP): Եվրոպական պաշտոնյաները «Հարավային միջանցքը», որը նպատակ ուներ Կասպիական ավազանի և Մերձավոր Արևելքի էներգակիրները կապել Եվրոպայի հետ, բնութագրում են որպես «ԵՄ-ի էներգետիկ անվտանգության կարևորագույն առաջնահերթություններից»¹⁹: Այդ համատեքստում «Նաբուկկո» գազատարը դիտարկվում էր որպես էներգակիրների երթուղիների բազմազանեցման նոր, առաջատար նախագիծ: Ստանալով ԱՄՆ-ի անվերապահ աջակցությունը՝ գործարկվելու դեպքում գազատարը կասպյան և մերձավորարևելյան էներգառեսուրսները Թուրքիայի տարածքով կկապեր Եվրոպայի հետ՝ բացառելով ցանկացած ռուսական ներգրավում:

¹⁶ An External Policy to Serve Europe's Energy Interests, available at http://ec.europa.eu/dgs/energy_transport/international/doc/paper_solana_sg_energy_en.pdf

¹⁷ An External Policy ...

¹⁸ Այս քաղաքական նախագիծը մշակվել է 2003 թվականին և պաշտոնապես անվանվել «Հարավային գազային միջանցք» 2008 թվականին՝ Ռազմավարական էներգետիկ վերանայման երկրորդ փուլի շրջանակներում:

¹⁹ European Commission. An EU energy security and solidarity action plan. Brussels, 13.11.2008. COM (2008) 781 final, available at <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=COM:2008:0781:FIN:EN:PDF>

ԵՄ էներգետիկ պաշարների ներկրումների երթուղիների բազմազանեցման կենսական նշանակությունն ավելի է մեծացել 2014-ից՝ պայմանավորված ուկրաինական դեպքերով և Ղրիմի ճգնաժամով, Ռուսաստանի դեմ արևմտյան պատժամիջոցների շրջանակի ընդլայնմամբ, ինչը, որոշ կարծիքների համաձայն, կարող է ինչ որ պահի հանգեցնել ռուսական բնական գազի վրա էմբարգոյի կիրառմանը²⁰: Ի պատասխան ռուսական էներգետիկ ներկրումներին այլընտրանք ձևավորելու ԵՄ-ի մտադրությանը՝ Մոսկվան մշակում է արագ աճող ասիական շուկաներ էներգակիրների արտահանման երթուղիների բազմազանեցման սեփական ռազմավարությունը:

Եվրոպական էներգետիկ անվտանգությանն անդրադառնալիս հարկ է նաև հաշվի առնել, որ Ռուսաստանից ներկրվող հանածո վառելիքի պաշարների փոխարինումը ԱՄՆ-ից ներկրվող այլընտրանքային պաշարներով՝ լինի դա հեղուկ բնական գազ, թե թերթաքարային գազ, կպահանջի հսկայական ներդրումներ և ժամանակ, քանզի ենթակառուցվածքը պետք է հարմարեցվի հեղուկ բնական գազի ստացմանը: Միաժամանակ, ամերիկյան էներգետիկ բիզնեսին և շուկային բնորոշ առանձնահատկությունների պատճառով հանածո վառելիքի ամերիկյան պաշարների գինը կլինի շատ ավելի բարձր, քան ռուսական էներգետիկ պաշարների ներկրման դեպքում: Մեկ այլ հավանական այլընտրանքի՝ թերթաքարային գազի, տեղական արտադրության զարգացումը ևս կպահանջի զգալի ներդրումներ: Ավելին, դա արգելված է մի շարք եվրոպական երկրներում՝ բնապահապանական նկատառումներով, և, ամենայն հավանականությամբ, չի բավարարի եվրոպական սպառողների պահանջարկը: Ուստի, ԵՄ-ի համար ավելի շահութաբեր է էներգետիկ պաշարների ներկրումը և վերականգնվող էներգետիկ աղբյուրների շահագործումը: Դա է պատճառը, որ արդի էներգետիկ խնդիրներին առավել արդյունավետ արձագանքներու համար ԵՄ-ը պետք է նվազեցնի Եվրոպայի կախվածությունը ռուսական էներգետիկ պաշարների

²⁰ **Holland A.**, Europe Should Embargo Imports of Russian Natural Gas, available at <http://www.energytrendsinsider.com/2014/03/03/europe-should-embargo-imports-of-russian-natural-gas/>

ներկրումներից և ապահովի գազամատակարարում այլընտրանքային աղբյուրների միջոցով:

2014 թվականի մայիսին Եվրոպական հանձնաժողովը հրապարակեց «Էներգետիկ անվտանգության ռազմավարություն» անունը կրող փաստաթուղթը՝ արդի հիմնախնդիրներին և երկարաժամկետ էներգետիկ անվտանգության մարտահրավերներին դիմակայելու, ինչպես նաև կայուն ու մեծածավալ էներգապաշարների մատակարարում ապահովելու համար²¹: Այնուհետև, 2015 թվականի փետրվարին Հանձնաժողովը մշակեց Եվրոպական միության նոր էներգետիկ ռազմավարություն, որը նպատակ ուներ եվրոպական սպառողների համար ապահովել «անվտանգ, կայուն, մրցունակ և մատչելի էներգիայի» մատակարարում և ձևավորել ԵՄ անդամ պետությունների միասնական մոտեցում արտաքին էներգետիկ քաղաքականության խնդիրների վերաբերյալ²²:

Հիմնական նպատակներն էին ԵՄ-ի ներսում էներգետիկ արտադրության արդիականացումն ու ընդլայնումը, կոնկրետ հանածո վառելիքներից, էներգապաշարների մատակարարներից և երթուղիներից ԵՄ-ի կախվածության նվազեցումը՝ մատակարար երկրների ու երթուղիների բազմազանեցման ճանապարհով²³: Նոր ռազմավարության մեջ ընդգծվում էր նաև զգալի կշիռ ունեցող արտադրող և տարանցիկ երկրների ու տարածաշրջանների հետ նոր էներգետիկ փոխհարաբերությունների և ռազմավարական համագործակցությունների հաստատման անհրաժեշտությունը: Ըստ Եվրոպական հանձնաժողովի, «Գազի մատակարարման երթուղիների բազմազանեցումն ապահովելու համար անհրաժեշտ է ակտիվացնել «Հարավային գազային միջանցքի» կառուցման ուղղությամբ կատարվող աշխատանքները: Դա Կենտրոնական Ասիայի երկրներին հնարավորություն կտա իրենց գազն արտահանել Եվրոպա»²⁴: Այդ տեսանկ-

²¹ European Energy Security Strategy. Communication from the Commission to the European Parliament and the Council. Brussels, 28.5.2014 COM(2014) 330 final, available at <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52014DC0330&from=EN>

²² Energy Union ...

²³ Energy Union ...

²⁴ Energy Union ...

յունից ԵՄ-ի Նոր էներգետիկ ռազմավարությունն էապես մեծացնում է Հարավային Կովկասի՝ որպես կասպիական էներգառեսուրսների տեղափոխման միջանցքի, կարևորությունը, և, մասնավորապես, Ադրբեջանի՝ որպես տարածաշրջանում էներգետիկ պաշարների հիմնական արտադրողի և առանցքային մասնակցի, դերը մի շարք ընթացիկ ծրագրերում: Դրանք հիմնականում ուղղված են Եվրոպան իր արևելյան հարևանների հետ կապող գազատարների կառուցմանը, մասնավորապես՝ «Հարավային գազային միջանցք» ծրագրի շրջանակներում:

«Հարավային գազային միջանցքի» նշանակությունը Հարավային Կովկասի համար: Հարավային Կովկասի դիտարկումը՝ որպես էներգառեսուրսների մատակարարի և տարանցիկ երթուղու, հին հայեցակարգ է: Տարածաշրջանը ներառվել է արևմտյան էներգետիկ հետաքրքրությունների շրջանակներում սկսած 1883 թվականից, երբ Ռոթշիլդ ընտանիքի հովանավորությամբ կառուցվեց Բաքու-Փոթի երկաթգիծը՝ կասպիական նավթը միջազգային շուկա արտահանելու համար²⁵:

Հայտնի պատճառներով խորհրդային ժամանակաշրջանում Արևմուտքը չունեւ տարածաշրջանում գործելու հնարավորություն: Խորհրդային Միության փլուզումից հետո Հարավային Կովկասի նկատմամբ մեծացավ տարածաշրջանային և արտատարածաշրջանային դերակատարների ուշադրությունը ջրային և էներգետիկ հասանելի ռեսուրսների առկայության և տարանցիկ երթուղի դառնալու ներուժի շնորհիվ: 1990-ական թվականների կեսերին Բրյուսելը նախաձեռնեց «Տասիս»-ի (Տեխնիկական աջակցություն Անկախ պետությունների համագործակցությանը) հիմնական բաղկացուցիչ հանդիսացող «ՏՐԱՍԵԿԱ» և «ԻՆՈԳԵՅԹ» (Եվրոպա միջպետական նավթի և գազի տեղափոխում) փոխադրման միջանցքի (Եվրոպա-Կովկաս-Ասիա) ծրագրերը: Նպատակն էր «ավանդական կենտրոնացված առևտրի և տեղափոխման հոսքերի բազմազանեցումը, դեպի արևմտյան երկրներ

²⁵ Wisniewski J., EU Energy Diversification Policy and the Case of South Caucasus, *Political Perspectives*, 5 (2), 2011, 58-79.

նոր (այլընտրանքային) առևտրային երթուղիների բացումը»²⁶, ինչպես նաև աջակցությունը շահագրգիռ երկրների էներգետիկ ենթակառուցվածքի զարգացմանը: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ ունենալով տարածաշրջանում աշխարհաքաղաքական իրավիճակը փոխելու և եվրոպական էներգետիկ անվտանգության շահերն ապահովելու զգալի ներուժ, երկու նախագծերն էլ նախատեսված էին հիմնականում տեխնիկական աջակցություն տրամադրելու համար, ինչը զգալիորեն նվազեցրեց դրանց ազդեցությունը:

Միայն 1994 թվականին ադրբեջական կառավարության և նավթային ընկերությունների միջազգային կոնսորցիումի միջև առաջին միջազգային նավթային համաձայնագրի ստորագրումից և ԱՄՆ-ի վերահսկողության ներքո երկու խոշոր փոխադրման նախագծերի՝ «Բաքու-Թբիլիսի-Ջեյհան» նավթամուղի և «Բաքու-Թբիլիսի-Էրզրում» գազամուղի, իրականացումից հետո Եվրոպան սկսեց Հարավային Կովկասը դիտարկել որպես կասսայան ավազանի էներգառեսուրսների տեղափոխման իրատեսական էներգետիկ միջանցք՝ որը կշրջանցի ոչ միայն Ռուսաստանը, այլև Իրանը: Ս. Քորնելը և Ֆ. Սթարը նշում են, որ «Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և հարավկովկասյան խողովակաշարերի կառուցումը կարևոր հիմնասյուն է եվրոպական էներգետիկ անվտանգության համար՝ նպաստելով մատակարարման երթուղիների բազմազանեցմանը և, միաժամանակ, ԵՄ-ի հարաբերությունների ամրապնդմանը էներգետիկ անվտանգության ոլորտում նոր գործընկեր տարածաշրջանի հետ»²⁷:

Վերոնշյալ երկու նախագծերի հաջող ավարտն, անկասկած, ԵՄ-ի առաջնորդներին խրախուսեց 2000-ականների սկզբին նախաձեռնելու «Նաբուկկո» նախագծի իրականացումը: Վերջինս կարող էր էներգետիկ պաշարների եվրոպական սպառողներին ուղղակիորեն կապել այլընտրանքային մատակարարների հետ՝ լիովին բացառելով Ռուսաստանի ներգրավման անհրաժեշտությունը:

²⁶ «ՏՐԱՍԵԿԱ» ծրագրի պաշտոնական կայքէջ, մատչելի է <http://www.traceca.org/ru/traseka/istorija-traseka>

²⁷ Cornell S. and Starr F., ..., p. 82.

«Նաբուկկո» նախագծի հիմքը դրվել է 2002 թվականի հունիսին ստորագրված արձանագրությամբ, որով ավստրիական «OMV»-ը, հունգարական «MOL»-ը, բուլղարական «Բուլղարգազը»-ը, ռումինական «Տրանսգազը» և թուրքական «Բոթաշը»-ը համաձայնության եկան ստեղծել Էրզրումից (Թուրքիա) Ավստրիա ձգվող խողովակաշար²⁸: Առանց մանրամասնելու ծրագրի ծագման և զարգացման ընթացքը, հարկ է նշել, որ գազատարի հաջող ավարտի դեպքում լիարժեք թողունակություն՝ տարեկան 31 մլրդ խմ գազ, նախատեսվում է ապահովել 2020 թվականից ոչ շուտ: Ադրբեջանը «Նաբուկկո» գազատարի նախագծի առանցքային մասնակիցներից էր, քանզի միակ երկիրն էր, որը նախագծի շրջանակներում պաշտոնապես պարտավորվել էր տրամադրել գազ: Այդ լույսի ներքո 2008 թվականի հուլիսին Եվրոպական միության և Ադրբեջանի միջև ստորագրվեց Էներգետիկ ոլորտում Ռազմավարական համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր Ադրբեջանից և կասպյան ավազանից դեպի ԵՄ Էներգամատակարարման ու տեղափոխման համակարգերի հուսալիությունն ու անվտանգությունը մեծացնելու նպատակով²⁹: Այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ այդ հավակնոտ նախագծի իրականացումը կապված է մի շարք տնտեսական, աշխարհաքաղաքական և աշխարհագրական բնույթի խնդիրների հետ:

«Նաբուկկո» նախագծի գլխավոր թերություններից մեկը երաշխավորված հումքային բազայի բացակայությունն էր: Քաղաքական անկայունության պատճառով Մերձավոր Արևելքը դարձել էր անհասանելի, միջազգային պատժամիջոցների պատճառով կասեցվել էին Իրանից գազամատակարարումները: Միաժամանակ, մուտքը դեպի Կենտրոնական Ասիայի գազային պաշարներ շարունակում էր մնալ փակ՝ կապված Կասպից ծովի անորոշ իրավական կարգավիճակի, ինչպես նաև Կասպից ծովի հատակով անցնող ցանկացած խողովակաշարի կառուցման ուղղությամբ Ռուսաստանի և Իրանի շարունակական դիմադրության հետ:

²⁸ Wisniewski J., ..., p. 61.

²⁹ Memorandum of Understanding on a strategic partnership between the European Union and the Republic of Azerbaijan in the Field of Energy, available at http://ec.europa.eu/energy/international/doc/mou_azerbaijan_en.pdf

Չնայած նախատեսված էր, որ «Շահ Դենիզ» հանքավայրի երկրորդ հերթի շահագործման արդյունքում «Նաբուկկոյին» կմատակարարվի 8 մլրդ խմ գազ, այդուհանդերձ, Ադրբեջանի գազային պաշարներն ակնհայտորեն բավարար չէին նախագծի արդյունավետությունն ապահովելու համար, քանզի գազատարը պահանջում էր տարեկան մոտ 30 մլրդ խմ գազ՝ տնտեսապես կենսունակ լինելու համար³⁰: Ավելին, Ադրբեջանը ոչ միայն միացել էր էներգետիկ ոլորտի մի շարք միջազգային նախաձեռնությունների («Բաքու-Թբիլիսի-Էրզրում» գազատար, Ռումինիայի հետ առանձին համաձայնագրեր հեղուկ բնական գազի տեղափոխման (AGRI) և «Նաբուկկոյի» վերաբերյալ), այլև համաձայնագիր էր կնքել «Գազպրոմի» հետ «Շահ Դենիզ-2»-ի գազի վերաբերյալ՝ լուրջ կասկածի տակ դնելով անգամ խոստացված 8 մլրդ խմ գազը «Նաբուկկոյին» մատակարարելու հարցը³¹: «Նաբուկկո» նախագիծը նաև քննադատվում էր ոչ շահութաբեր լինելու համար, մասնավորապես, հաշվի առնելով դրա բարձր գինը (շուրջ 13 մլրդ դոլար) և Հարավարևելյան ու Կենտրոնական Եվրոպայի միայն սահմանափակ թվով երկրների գազ մատակարարելու հնարավորությունը³²:

Հավանական մատակարարներից գազի ներկրման հասանելիության հարցն ավելի անորոշ դարձավ Կենտրոնական Ասիա-Չինաստան գազամուղի բացման և Ադրբեջանի ու Կենտրոնական Ասիայի երկրների՝ «Հարավային հոսք» նախագծում ներգրավման լույսի ներքո: Վերջինս Մոսկվայի նախաձեռնած մեկ այլ գազատարի կառուցման նախագիծ էր, որը Սև ծովի հատակով հասնելու էր Բուլղարիա, այնուհետև՝ այլ եվրոպական երկրներ³³:

Բացի «Հարավային հոսք» նախագծից, որոշ այլ ռուսական նախաձեռնություններ ևս նպաստեցին «Նաբուկկոյի»՝ չեղարկմանը և բազմազանեցման ուղղությամբ եվրոպական փորձերի արգելակմանը: Այդ նախաձեռնությունների թվում էին Մոսկվայի ջանքերն՝ ուղղված

³⁰ Մնացած 20 մլրդ խմ գազը կարող է մատակարարվել Ղազախստանից,

Թուրքմենստանից և Հյուսիսային Իրաքից:

³¹ Wisniewski J., ..., p. 67.

³² Wisniewski J., ..., pp. 63-64.

³³ Ramsay W., Doubts about Nabucco Don't Originate in China - Look to Europe, available at <http://www.ifri.org/?page=detail-contribution&id=5779>

Ադրբեջանի և Կենտրոնական Ասիայի երկրների՝ մասնավորապես Ղազախստանի և Թուրքմենստանի հետ երկարաժամկետ գազային գործարքներ կնքելուն, ինչը կարգելափակեր դեպի ԵՄ մատակարարումներն, ինչպես նաև այլ առաջատար արտադրող երկրների հետ, ինչպիսիք են Քաթարը և Իրանը, բնական գազի արտահանման համակարգված քաղաքականություն վարելու մտադրությունը³⁴։ Ի վերջո, 2013 թվականի դեկտեմբերի սկզբին Եվրոպական հանձնաժողովը հայտարարեց, որ Ռուսաստանի և ԵՄ շահագրգիռ անդամ երկրների միջև կնքված բոլոր երկկողմ համաձայնագրերը «Հարավային հոսք» գազատարի կառուցման վերաբերյալ հակասում են ԵՄ օրենքներին և վերանայման կարիք ունեն³⁵։ Արդյուքում «2014 թվականի հունիսին Բուլղարիան (որի տարածքով պետք է անցնեն «Հարավային հոսքի» եվրոպական հատվածի սկզբնամասը) հայտարարեց, որ դուրս է գալիս ծրագրից։ Թվում էր, թե Ռուսաստանը հայտնվել է անելանելի իրավիճակում։ Սակայն տարվերջին Ռուսաստանի նախագահն Անկարա կատարած այցի ժամանակ հայտարարեց, որ Մոսկվան դադարեցնում է «Հարավային հոսք» ծրագիրը և սկսում է իրագործել մեկ այլ՝ «Թուրքական հոսք» ծրագիր։ Իհարկե, դա պարզապես «Հարավային հոսքի» ձևափոխված տարբերակն է, քանի որ նախատեսվում է այդ ծրագրի երթուղու սկզբնական հատվածով՝ Սև ծովի հատակով կառուցվող գազատարով (շուրջ 3.3 միլիարդ եվրո արժողությամբ)³⁶, տեղափոխել նույն ծավալի գազ և այն վաճառել Թուրքիային։ Անկարան նախատեսում է այն վաճառել Եվրոպային՝ տեղափոխելով մի գազատարով, որը պետք է անցնի Հունաստանի, Մակեդոնիայի, Սերբիայի և Հունգարիայի տարածքներով։ Պատասխանը շատ

³⁴ Пашковская И., Европейский Союз: энергетическая политика в отношении новых независимых государств. МГИМО, Центр евро-атлантической безопасности. Выпуск 1 (22), Июль 2009, сс. 51-52.

³⁵ South Stream bilateral deals breach EU law, Commission says. 04.12.2013, available at <http://www.euractive.com/energy/commission-south-stream-agreement-news-532120>

³⁶ Transadriatic Pipeline and Turkish Stream repeating History <http://www.naturalgaseurope.com/trans-adriatic-pipeline-and-turkish-stream-repeating-history-24524>

չուշացավ»³⁷: Ըստ Հունաստանի էներգետիկայի նախարար Պ. Լաֆազանիսի, ԱՄՆ Պետդեպարտամենտի հատուկ բանագնաց Ա. Հոքստայնն իր հետ բանակցություններում հայտարարել է, որ Միացյալ Նահանգների համար «Թուրքական հոսքի» իրագործումը ցանկալի չէ և խորհուրդ է տվել հրաժարվել այդ ծրագրից ու կենտրոնանալ Անդրադրիատիկ գազատարի (TAP³⁸) վրա:³⁹ Հունաստանի կառավարությունն, ի տարբերություն Բուլղարիայի, հայտարարել է, որ «Թուրքական հոսքն» իր երկրի համար շահավետ է և ջանքեր է գործադրելու դրա իրագործման համար:⁴⁰ Այդ համատեքստում Հունաստանի կառավարության ռազմավարությունը՝ «Թուրքական հոսքն» օգտագործելու որպես լծակ Հունաստանի միջազգային վարկատուների հետ բանակցություններում, ինչպես նաև Մոսկվայի և Աթենքի քաղաքականությունների մոտարկումը, անկասկած, թեժացրեց էներգետիկ անվտանգության շուրջ ծագած ԵՄ-Ռուսաստան վեճը⁴¹: Ուստի, զարմանալի չէ, որ «Նաբուկկո» նախագիծն աստիճանաբար կորցրեց իր հուսալիությունը: Արդյունքում, Բրյուսելը նախընտրեց ավելի փոքր նախագծերի իրականացում՝ ապահովելով մուտք կասպիական գազի հանքավայրեր (մասնավորապես՝ Ադրբեջանի «Շահ Դենիզ» հանքավայրի երկրորդ հերթ): Սկզբում «Նաբուկկոն» բաժանվեց երկու մասի՝ Անդրանատոլիական գազատար

³⁷ **Թորոսյան Տ., Արշակյան Գ.**, Թուրքիայի արդի քաղաքականության նախադրյալները, մարտահրավերներն ու հեռանկարները, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2, 2014թ., 139-160:

³⁸ TAP-ը 870 կմ երկարությամբ նախագծված գազատար է, որը նախատեսված է ապահովելու Թուրքիայի և Հունաստանի սահմաններից Ալբանիայի տարածքով և Ադրիատիկ ծովով դեպի Իտալիա գազի տեղափոխումը: Գազատարի նախնական հզորությունը կլինի տարեկան մոտ 10 մլրդ խմ, որը գրեթե կկրկնապատկվի ապագայում, երբ Կասպիական տարածաշրջանում սկսեն գործարկվել էներգակիրների նոր աղբյուրներ:

³⁹ US urges Athens to focus on TAP, not Turkish Stream, available at <http://www.infobalkans.com/2015/05/08/us-urges-athens-focus-tap-not-turkish-stream>, 14.05.2015

⁴⁰ США прямо заявили, что не хотят участия Греции в «Турецком потоке», www.regnum.ru/news/1923051.html

⁴¹ **Pourzitakis S.**, The Energy Security Dilemma of Turkish Stream, <http://carnegieeurope.eu/strategieurope/?fa=60861>

(TANAP)⁴² Ադրբեջանից Հունաստանի և Բուլղարիայի սահմաններ գազի տեղափոխման նախագիծ, և ձևափոխված «Նաբուկկո-Արևմուտք»՝ Թուրքիայի սահմաններից դեպի Բուլղարիա և Ավստրիա ձգվող գազատար: Արդյունքում շահագրգիռ ընկերությունները հրաժարվեցին «Նաբուկկո-Արևմուտք» նախագծից, երբ 2013 թվականի հունիսի 28-ին «Շահ Դենիզի» շահագործման երկրորդ հերթի համար ադրբեջանական կոնսորցիումը ընտրեց պակաս հավակնոտ TANAP-TAP համակարգը (տարեկան 10-20 մլրդ խմ գազ)՝ որպես Եվրոպական շուկաներ իր գազի արտահանման երթուղի: Դա հարավային ուղղությամբ ԵՄ-ի էներգետիկ քաղաքականության նոր, անխուսափելի զարգացումների պատճառ դարձավ:

Ընդհանուր առմամբ, կարելի է եզրակացնել, որ «Հարավային գազային միջանցքը» կարևոր քայլ էր հարավկովկասյան երկրները ԵՄ-ի էներգետիկ հետաքրքրությունների ոլորտ ներգրավելու, Եվրոպական էներգետիկ շահերն արևելյան ուղղությամբ ընդլայնելու, ինչպես նաև ԵՄ-ի և իր արևելյան գործընկերների միջև էներգետիկ ոլորտի համագործակցությունը խթանելու ուղղությամբ: Այդուհանդերձ, «Հարավային գազային միջանցքի» մաս կազմող TANAP-TAP համակարգը՝ որպես ԵՄ-ի գազի ներկրման երթուղիների բազմազանեցման մեխանիզմ, կլինի ի սկզբանե նախատեսվածից պակաս կարևոր: Չնայած վերջին զարգացումները, կապված Իրանի Իսլամական Հանրապետության և մի շարք ազդեցիկ պետությունների միջև Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ համաձայնության ձեռքբերմանը, ենթադրվում է, որ «Հարավային գազային միջանցքը» դեռ երկար ճանապարհ ունի անցնելու: Միաժամանակ, տրամաբանական է ենթադրել, որ Հարավային Կովկասում ԵՄ-ի էներգետիկ նախագծերը սուսկ շահույթ հետապնդող նախագծեր չեն: Ըստ փորձագետների, «2014 թվականի դրությամբ Ադրբեջանի գազային

⁴² 2011 թվականի հոկտեմբերի 26-ին Ադրբեջանի և Թուրքիայի միջև կնքվեց համաձայնագրերի նոր փաթեթ, որի համաձայն Թուրքիան պետք է Անդրանատոլիական գազատարի (TANAP) (7-10 մլրդ դոլար) խողովակաշարով Ադրբեջանից տեղափոխի տարեկան 10 մլրդ խմ գազ մինչև Հունաստանի և Բուլղարիայի սահմաններ: Ակնկալվում էր, որ 2000 կմ երկարությամբ և 16 մլրդ խմ գազ տարեկան թողունակությամբ նախագծված գազատարը Թուրքիային մատակարարելու է տարեկան 6 մլրդ խմ գազ մինչև 2018 թվականը, իսկ Եվրոպային մինչև 2019 թվականը՝ տարեկան 10 մլրդ խմ գազ:

պաշարները միջազգային մարմինների կողմից գնահատվում են շուրջ 1 տրիլիոն խմ, որից 9 մլրդ խմ գազը սպառում է տեղական շուկան՝ երկու տոկոս աճի հնարավորությամբ կայուն երկարաժամկետ հեռանկարում: Հաշվի առնելով Թուրքիայի տարեկան մոտ 50 մլրդ խմ գազի պահանջը, ինչպես նաև հավելյալ 70 մլրդ խմ Իտալիայի և ևս 45 մլրդ խմ Հունաստանի, Բուլղարիայի, Սերբիայի, Խորվաթիայի, Հունգարիայի և Ավստրալիայի համար, ակնհայտ է, որ ադրբեջանական հանքավայրերը նույնիսկ միջնաժամկետ հեռանկարում՝ առաջիկա 10-20 տարում, չեն կարող բազմազանեցման ուղղությամբ էական փոփոխության հիմք դառնալ»⁴³: Թերևս, դա է պատճառը, որ Եվրոպացիները չեն շտապում մեծ ներդրումներ կատարել այդ նախագծերում և մտադիր են իրականացնել միայն նրանք, որոնք հովանավորում է Ադրբեջանի կառավարությունը:

Ուստի, «Հարավային գազային միջանցք» նախագծի կարևորությունը գլխավորապես պայմանավորված է ոչ թե Եվրոպա ներկրվող բնական գազի ծավալների աճով, այլ Եվրոպայի համար գազի այլընտրանքային միջանցք բացելու հնարավորությամբ: Ակնկալվում է, որ դա կարող է լինել ուղերձ Կրեմլին, որ Ռուսաստանը Կասպիական ավազանի էներգակիրների համար ընթացող մեծ խաղում միակ խաղացողը չէ: Միաժամանակ, լինելով Եվրոպական հարևանության քաղաքականության և «ՏՐԱՍԵԿԱ» ծրագրի մի մաս, «Հարավային գազային միջանցք» նախագիծը մեծապես բխում է ԵՄ-ի աշխարհաքաղաքական շահերից: Անկասկած, Արևմուտքի կողմից հովանավորվող անդրեվրասիական գազատարի բոլոր նախագծերը նպատակ ունեն ոչ միայն երաշխավորել էներգառեսուրսների հավելյալ մատակարարում, այլև ամրապնդել նախկին Խորհրդային Միության երկրների հետ համագործակցությունը՝ ապահովելով նրանց անկախությունը, կայունությունը և զարգացումը, ինչպես նաև այս կամ այն չափով խրախուսելով հետխորհրդային երկրների արևմտամետ քաղաքականությունը:

⁴³ Nabucco Redux?, available at <http://www.naturalgaseurope.com/southern-gas-corridor-iran-nabucco>

Առևտրային և տնտեսական հետաքրքրություններ

Էներգառեսուրսներից և տարանցիկ երթուղի դառնալու ներուժից զատ Հարավային Կովկասի տարածաշրջանը ԵՄ-ի համար ունի կարևոր նշանակություն նաև ավելի լայն տնտեսական առումով:

Չնայած Հարավային Կովկասը կարևոր շուկա չէ ԵՄ-ի համար, գլխավորապես պայմանավորված իր ոչ զգալի չափերով, այդուհանդերձ տարածաշրջանի՝ ռազմավարական առումով կարևոր աշխարհագրական դիրքն այն դարձնում է համաշխարհային առևտրի և, մասնավորապես, ԵՄ-ի համար կարևոր խաչմերուկ: Ներկայումս Հարավային Կովկասն ունի հյուսիս-հարավ և արևելք-արևմուտք երկայնքով միջմայրցամաքային համալիր տրանսպորտային համակարգերի կարևոր կենտրոն դառնալու լուրջ նախադրյալներ: Տարածաշրջանն ունի նաև կարևոր ռազմավարական դերակատարություն «Մեծ Մետաքսի ճանապարհի» վերագործարկման հարցում⁴⁴:

Լինելով «Մեծ Մետաքսի ճանապարհի» առանցքային մասնակիցներից՝ վերջին երկու տասնամյակներում Հարավային Կովկասը դիտվում է որպես Եվրոպան Կենտրոնական Ասիայի, Չինաստանի և Հնդկաստանի հետ կապող Արևելք-Արևմուտք երթուղի ստեղծելու առաջնային հնարավորություն: Այդ փոխադրման միջանցքի կարևորությունը ճանաչվել է 1990-ական թվականների կեսերին ԵՄ-ի «ՏՐԱՍԵԿԱ» ծրագրի շրջանակներում: Այն ներառում է ոչ միայն տնտեսական շահեր էլեկտրաէներգիայի և տարանցիկ փոխադրման շուրջ համագործակցության շրջանակներում, այլև ունի ավելի լայն նշանակություն: Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի միջև գործող երկաթուղային կապի (Բաքու-Թբիլիսի-Ախալքալաք) հետ զուգահեռ Կարսը (Թուրքիա) և Ախալքալաքը (Թբիլիսի) կապող երկաթուղու կառուցումը կապահովի Թուրքիայի կապը Կասպից ծովի հետ: Ղազախստանը (Կենտրոնական Ասիա) Չինաստանին կապող երկաթուղային գծերի կառուցումը վերոնշյալի հետ հնարավորություն կտա զգալիորեն մեծացնել ապրանքների հոսքը Ասիայի ողջ տարածքով: Ավելին, կատեղծվեն Եվրոպան Չինաստանի հետ կապելու

⁴⁴ Sen. Sam Brownback (R-Kan.). Silk Road Strategy Act of 1999: S. 579 (106th)

նախադրյալներ, ինչը կվերածվի հսկայական շուկայի ԵՄ-ի համար՝ հաշվի առնելով բնակչության խոշոր թվաքանակը⁴⁵:

Գործարկման դեպքում Հարավային Կովկասը կդառնա լիարժեք ինտեգրված փոխադրման համակարգի՝ «Նոր Մետաքսի ճանապարհի» առանցքային մաս: Այն կներառի Եվրոպան Ասիայի հետ կապող նավթատարներ, գազատարներ, երկաթուղիներ, օպտիկամանրաթելային մալուխներ, էլեկտրահաղորդման գծեր⁴⁶: Միևնույն ժամանակ, դա ակնհայտորեն հարավկովկասյան երկրներին եվրոպական և ասիական շուկաներ այլընտրանքային մուտքի հնարավորություն կընձեռնի, կխթանի նրանց տնտեսական և քաղաքական զարգացումը՝ նպաստելով ձեռքբերված անկախության ամրապնդմանը, ինչպես նաև կծառայի որպես այդ երկրների տնտեսություններ միջազգային կապիտալի ներգրավման խթան:

Այդ առումով Վրաստանը և Ադրբեջանը առանցքային կապող երկրներ են⁴⁷: Սակայն, Լեռնային Ղարաբաղի չլուծված հակամարտության և Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից շրջափակման քաղաքականության արդյունքում մեկ այլ տարածաշրջանային երկրի՝ Հայաստանի մեկուսացվածությունը նշանակում է, որ այն բնավ չի շահի այդ նախաձեռնությունից: Ավելին, ամենայն հավանականությամբ, ծրագրի իրականացումը կմեծացնի երկրի մեկուսացվածությունը՝ ստեղծելով անվտանգության ոլորտի հավելյալ խնդիրներ: Դա ակնհայտորեն ստեղծում է որոշ խոչընդոտներ նախագծում ԵՄ-ի լիարժեք ներգրավման և ներդրումների համար:

Բացի անդրազգային առևտրային ներուժից ԵՄ-ի սոցիալ-տնտեսական առաջնայնությունները Հարավային Կովկասի տարածաշրջանում ներառում են շուկայական տնտեսության զարգացում և գրավիչ բիզնես միջավայրի ստեղծում եվրոպական ներդրողների համար⁴⁸:

⁴⁵ **Cornell S. and Starr F.**, ..., p. 19.

⁴⁶ **German T.**, Corridor of Power: The Caucasus and Energy Security, *Caucasian Review of International Affairs*, 2, Spring, 2008, 64-72.

⁴⁷ **Cornell S. and Starr F.**, ..., p. 19.

⁴⁸ **Кудряшова Ю.**, Государства Южного Кавказа в Европейской Политике Соседства. Аналитические записки, МГИМО(У) МИД России, Выпуск 6, 2008, стр. 1.

Անվտանգության խնդիրներ

Այն բանի շնորհիվ, որ Հարավային Կովկասը դարձել է ԵՄ-ի էներգետիկ անվտանգության օրակարգի կարևոր բաղկացուցիչ, տարածաշրջանի անվտանգությունն ու կայունությունը ձեռք են բերել մեծ կարևորություն Եվրոպայի համար: Մակայն, տարածաշրջանի անվտանգության նկատմամբ ԵՄ-ի աճող հետաքրքրությունն ունի նաև այլ բացատրություն:

Լինելով եվրոպական անվտանգության գոտու սահմանագծում՝ Հարավային Կովկասը ներկայումս դիտարկվում է որպես 21-րդ դարի գլոբալ հիմնախնդիրների՝ ծայրահեղականություն, ահաբեկչություն, զանգվածային ոչնչացման զենքերի տարածում, թմրանյութերի վաճառք, անկառավարելի արտագաղթ, մարդկանց թրաֆիքինգ և այլն, ուղղությամբ առանձնահատուկ բուֆերային գոտի: Դա ավելի կարևորվեց ԵՄ-ի վերջին ընդլայնումներից հետո՝ հաշվի առնելով Հարավային Կովկասի զգալի մերձեցումը ԵՄ-ին, մասնավորապես, Վրաստանի և ԵՄ-ի միջև Սև ծովով ընդհանուր սահման ձևավորվելու հանգամանքը: Ուստի, ԵՄ-ը մեծապես հետաքրքրված է զարգացած, կայուն և անվտանգ Հարավային Կովկասի գոյությամբ՝ որպես Եվրոպայի հարևան: Տարածաշրջանում անկայունության և ճգնաժամի անբարենպաստ հետևանքները կարող են տարածվող ազդեցություն ունենալ Եվրոպայի վրա, այդ թվում՝ ներգաղթի հոսքեր, հումանիտար ճգնաժամ, կազմակերպված հանցագործությունների տարածում, իսլամական ծայրահեղականության աճ և այլն:

Ինչպես նշում են Ս. Քորնելը և Ֆ. Մթարը, «սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո, հաշվի առնելով իրանական և ռուսական օդային տարածքներն օգտագործելու հետ կապված բարդությունները, Հարավային Կովկասը դարձավ անփոխարինելի Ասիայի սրտում արևմտյան ռազմական և խաղաղապահ գործողությունների իրականացման համար»: Միաժամանակ, Մերձավոր Արևելքում ստեղծված անորոշ միջազգային իրավիճակի արդյունքում Հարավային Կովկասի դերն ավելի կարևորվեց անվտանգության ծայրահեղ

խնդիրների շրջանակում⁴⁹: Վերը թվարկված հանգամանքների արդյունքում տարածաշրջանային երկրները վերածվում են կարևոր գործընկերների անվտանգության նոր հիմնախնդիրներին արձագանքելու գործում՝ մասնավորապես հաշվի առնելով Իսլամական պետությունից եկող ահաբեկչության աճող վտանգը⁵⁰:

Ընդհանուր առմամբ, Հարավային Կովկասում անվտանգության ապահովման բացը պայմանավորված է մի շարք գործոններով: Նախևառաջ, տարածաշրջանում հակամարտությունների՝ Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի, լուծված չլինելը: Դա տարածաշրջանային անվտանգությանը սպառնացող առավել բարդ հիմնախնդիրն է, քանզի կարող է ազդել ոչ միայն Հարավային Կովկասի կայունության, այլև ավելի լայն ընդգրկումով միջազգային համայնքի և, մասնավորապես, Եվրոպայի վրա: Անկասկած, Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորումը շարունակում է մնալ տարածաշրջանային առավել կարևոր խնդիրներից մեկը: Հակամարտության խաղաղ կարգավորման բանակցություններում էական առաջընթացի բացակայությունը մեծացնում է լարվածությունը և ակտիվ ռազմական գործողությունների վերսկսման վտանգը: Այդ առումով տարածաշրջանային անվտանգությանը սպառնացող հիմնական վտանգների շարքում հարկ է ընդգծել տարեցտարի աճող հրադադարի ռեժիմի խախտումները, սպառազինությունների աննախադեպ մրցավազքը և Ադրբեյջանի կողմից ռազմական բյուջեի մեծացումը, որը տարածաշրջանում հանգեցնում է վտանգավոր ռազմական անհավասարակշռության:

Ավելին, ինչպես նշում է Թ. Ջերմանը, տարածաշրջանային անվտանգությանը սպառնալիք ներկայացնելուց զատ հակամարտությունների լուծված չլինելն «ի չիք է դարձնում տարածաշրջանային համագործակցության խթանման ջանքերը՝ խոչընդոտելով տնտեսական զարգացմանը և ապակայունացնելով տարածաշրջանը»⁵¹: Նման տեսակետն արդարացված է, քանզի շարունակական անկայունությո-

⁴⁹ **Cornell S. and Starr F.**, *The Caucasus: A challenge for Europe*, pp. 21-22.

⁵⁰ Նաև հայտնի է որպես Բրաքի և Լևանտի իսլամական պետություն, Բրաքի և Սիրիայի իսլամական պետություն կամ Բրաքի և Շամի իսլամական պետություն՝ ISIL կամ ISIS:

⁵¹ **German T.**, ..., p. 71.

յունը և տարածաշրջանային հակամարտությունների հավանական սրացումը կարող են բացասական ազդեցություն ունենալ Կասպիական ավազանում էլեկտրաէներգիայի արտադրման և եվրոպական շուկա մատակարարումների վրա, ինչպես նաև արգելակել ապագա ներդրումները: Ավելին, չլուծված հակամարտություններն ի չիք են դարձնում ԵՄ-ի ցանկացած փորձ՝ ուղղված տարածաշրջանի երեք երկրների միջև լիարժեք ինտեգրված տարածաշրջանային կապերի հաստատմանը: Հետևաբար, տարածաշրջանային հակամարտությունների խաղաղ կարգավորումը կարող է օգնել ամրապնդելու տարածաշրջանային անվտանգությունն ու կայունությունը, բարելավելու էներգետիկ անվտանգության մակարդակը և, ի վերջո, հնարավոր դարձնելու համապարփակ տարածաշրջանային համագործակցությունն, ինչը մեծապես կարևորում է ԵՄ-ը:

ԵՄ-ը ճանաչել է տարածաշրջանային հակամարտությունների հրատապ լուծման կարևորությունը «Եվրոպական անվտանգության ռազմավարություն» կոչվող փաստաթղթում, որում չլուծված տարածաշրջանային հակամարտությունները դիտարկվում են որպես լուրջ սպառնալիք ոչ միայն Հարավային Կովկասի կայունության, այլև, ընդհանուր առմամբ, Եվրոպայի համար⁵²: ԵՄ-ի քաղաքականության մեջ արձանագրված այդ փոփոխությունը և ավելի ակտիվ հետաքրքրությունը Հարավային Կովկասի խնդիրների նկատմամբ ընդգծվել է նաև Եվրոպական հանձնաժողովի կողմից Եվրոպական խորհրդին և Եվրոպական խորհրդարանին ուղղված Հաղորդման մեջ, որում նշվում է տարածաշրջանային հակամարտությունների խաղաղ կարգավորման գործընթացում ԵՄ-ի՝ ավելի ակտիվ դերակատարություն ստանձնելու անհրաժեշտության մասին՝ հաշվի առնելով «ԵՄ-ի համար կողմնակի ազդեցության վտանգները, այդ թվում՝ անօրինական ներգաղթ, ոչ հուսալի էներգամատակարարումներ, շրջակա միջավայրի ոչնչացում և ահաբեկչություն»⁵³:

⁵² A Secure Europe in a better world. European Security Strategy. Brussels, 12 December 2003, p. 3.

⁵³ Communication from the Commission to the Council and the European Parliament on strengthening the European Neighbourhood Policy, COM (2006) 726 Final, 4 December 2006.

Երկրորդ, անդրազգային հանցավոր գործունեություն: Գտնվելով Արևելքի և Արևմուտքի խաչմերուկում՝ Հարավային Կովկասը կարող է հեշտությամբ դառնալ նոր դարաշրջանի անդրազգային վտանգների տարածման տարանցիկ ուղի: Տարածաշրջանում կազմակերպված հանցավոր գործունեությունների թվի աճին նպաստում են մի շարք գործոններ, այդ թվում՝ տնտեսական անկում և քաղաքական անկայություն, պետական կառույցների թուլություն, սահմանային վերահսկողության ապահովման ձախողում, աշխարհագրական գործոններ: Դրանց շարքում ահաբեկչությունը ճանաչվել է որպես Եվրոպային սպառնացող ամենամեծ վտանգներից մեկը⁵⁴: Մեպտեմբերի 11-ի իրադարձությունները պատճառ դարձան ավելի լայն սնծովյան տարածաշրջանի և, համապատասխանաբար, Հարավային Կովկասի տարածաշրջանի ռազմավարական կարևորության վերաիմաստավորման համար: Ծառայելով որպես բուֆերային գոտի և խոչընդոտելով ահաբեկչական վտանգների ներթափանցմանը Եվրոպա՝ տարածաշրջանը ձեռք է բերում ավելի մեծ նշանակություն եվրոպական անվտանգության օրակարգում: Այդ համատեքստում հարկ է ընդգծել նաև Իրաքի և Լևանտի իսլամական պետության, ինչպես նաև իսլամական կազմակերպությունների աճող դերակատարությունը Հյուսիսային Կովկասում:

Երրորդ, գերտերությունների և հարևան երկրների աշխարհաքաղաքական մրցակցությունը տարածաշրջանում: Հայտնի է, որ Հարավային Կովկասում Ռուսաստանի, ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Թուրքիայի, Իրանի շահերի բախումը, որն ուղեկցվում է երեք հարավկովկասյան երկրների միմյանց և անմիջական հարևանների հետ ունեցած լարված հարաբերություններով, էապես խոչընդոտում է տարածաշրջանի կայունությանը և անվտանգությանը: Ի հավելումն դրան, հարավկովկասյան երկրների և ընդհանուր առմամբ տարածաշրջանի կայունությունն ապահովող մեխանիզմների և անվտանգության կողմնորոշիչների բազմազանությունը ևս խորացնում է անապահովությունը և բաժանարար գծերը տարածաշրջանում: Այդ առումով, Հայաստանը, ակնկալելով վտանգ Թուրքիայից և Ադրբեջանից, ապավինում է Ռուսաստանի ռազմական աջակցությանը, Ադրբեջանը՝

⁵⁴ A Secure ..., p. 3.

համապատասխանաբար Իրանից և Հայաստանից, գերակշիռ դեպքերում հենվում է Թուրքիայի ռազմական աջակցության վրա, Վրաստանը՝ Ռուսաստանից՝ իր հերթին հույսը դնելով ԱՄՆ-ի և ԵՄ-ի աջակցության վրա:

Եվ, ի վերջո, քաղաքացիական և քաղաքական հակամարտությունները: Թույլ ինքնիշխանությունը, ոչ արդյունավետ կառավարումը, քաղաքացիական հասարակության, ժողովրդավարական հաստատությունների հասունացած չլինելը, անարդյունավետ սահմանային վերահսկողությունը, ինչպես նաև ոչ լիարժեք իրավական համակարգը կարող են իրական վտանգ ներկայացնել տարածաշրջանային կայունության համար: Ուստի, ակնհայտ է, որ անվտանգության խնդիրները Հարավային Կովասում այլևս չեն կարող դիտարկվել ԵՄ-ի անվտանգության օրակարգից դուրս: Հարավային Կովկասում անվտանգության չլուծված խնդիրներն ուղղակի բացասական ազդեցություն ունեն ԵՄ-ի անվտանգության վրա: Դրանք կարող են եվրոպական անվտանգության համար ունենալ կողմնակի հետևանքներ, այդ թվում՝ ահաբեկչություն, անօրինական ներգաղթ, ԵՄ-ի՝ դեպի էներգետիկ պաշարներ մուտքի խոչընդոտում, էներգառեսուրսների մատակարարման անվտանգության սպառնալիք, ինչպես նաև տարածաշրջանում ԵՄ-ի ինտեգրման նախագծերի հաջող իրականացման արգելակում: Հետևաբար, ԵՄ-ը մեծապես հետաքրքրված է Հարավային Կովկասի կայունությամբ և անվտանգությամբ:

Ինքնիշխանություն, արդյունավետ կառավարում և ժողովրդավարություն

Բնորոշվելով որպես «քաղաքացիական իշխանություն»⁵⁵ և «նորմատիվ իշխանություն»⁵⁶՝ ԵՄ-ի միջազգային դերակատարությունը ենթադրում է, ի թիվս այլոց, խաղաղության, ազատության,

⁵⁵ **Duchêne F.**, Europe's Role in World Peace in *Europe Tomorrow: Sixteen Europeans Look Ahead*. (Ed. by R. Mayne) 1972. Fontana. London.

⁵⁶ **Manners I.**, Normative Power Europe: A Contradiction in Terms?, available at http://rudar.ruc.dk/bitstream/1800/8930/1/Ian_Manners_Normative_Power_Europe_A_Contradiction_in_Terms_COPRI_38_2000.pdf

ժողովրդավարության, օրենքի գերակայության, ինչպես նաև մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների սկզբունքների ու նորմերի խթանում և զարգացում: Ֆ. Դյուշենը նշում է, որ «Եվրոպական հանձնաժողովը պետք է լինի քաղաքացիական և ժողովրդավարական չափանիշների միջազգային տարածումն ապահովող ուժ, այլապես այն ինքն այս կամ այն չափով կդառնա իրենից ավելի հզոր և համախմբած իշխանությունների վարած ուժային քաղաքականության զոհ»⁵⁷: Ժողովրդավարության խթանումը նաև համապատասխանում է «նորմատիվ իշխանության» հեռանկարին, որի համաձայն ԵՄ-ն իր հիմնարար նորմերը և սկզբունքները զարգացնում է համաշխարհային մակարդակով:

Վերոնշյալ մոտեցումների համաձայն, ժողովրդավարության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության խթանումը այն հիմնարար սկզբունքն է, որը ձևավորում է ԵՄ-ի արտաքին քաղաքականությունը հարևան տարածաշրջանում: Ուստի, սեփական ժողովրդավարական երաշխիքների ամրապնդման համար Եվրոպայի շահերից բխում է Հարավային Կովկասում ինքնիշխանության, օրենքի գերակայության և ժողովրդավարական հաստատություններին աջակցությունը և դրանց խթանումը:

Հաշվի առնելով Հարավային Կովկասի տարածաշրջանային զարգացումների բարդ բնույթը և, մասնավորապես, տարածաշրջանի երկրներում ամուր ինքնիշխանության ձևավորման գործընթացի ձախողումը՝ Ս. Քորնելը և Ֆ. Սթարը կարևորում են երեք հայեցակարգերի՝ ինքնիշխանության, կառավարման և ժողովրդավարության փոխհարաբերությունները տարածաշրջանում: Ակնհայտորեն, տարածաշրջանային երկրներում ամուր ինքնիշխանության ձևավորման ձախողումը ուղղակիորեն կապված է կառավարությունների՝ արդյունավետ կառավարում ապահովելու ձախողման և ժողովրդավարական երաշխիքների բացակայության հետ: Ոչ արդյունավետ կառավարումը իրական ժողովրդավարությունը դարձնում է անհնարին: Ավելին, դա մեծացնում է սոցիալական

⁵⁷ **Duchêne F.**, *The European Community and the Uncertainties of Interdependence, A Nation Writ Large? Foreign Policy Problems before the European Community.* (Ed. by M. Kohnstamm and W. Hager) Macmillan.1973, p. 20.

հակամարտության վտանգը և խոչընդոտում է տարածաշրջանային հակամարտություն- ների կարգավորման գործընթացին⁵⁸:

ԵՄ-ի վերջին ընդլայնումներից հետո տարածաշրջանի երկրների ինքնիշխանության հարցերը կարող են ուղղակի ազդեցություն ունենալ Եվրոպայի վրա: Հետևաբար, ԵՄ-ը մեծապես հետաքրքրված է պետության կառուցմանն աջակցության, արդյունավետ կառավարման և ազատական-սահմանադրական ենթակառուցվածքի մշակման, ինչպես նաև Հարավային Կովկասում ժողովրդավարական հաստատությունների համախմբման և զարգացման գործընթացներով: Դրանց ձախողումը կհանգեցնի սոցիալ-տնտեսական հետընթացի և անվտանգության խնդիրների շարունակականությանը, ինչպես նաև տարածաշրջանային անկայունությանը: ԵՄ-ը նաև կարևորում է ամուր ինքնիշխանությունը, ինստիտուցիոնալ ժողովրդավարության և լավ կառավարման առաջընթացը Հարավային Կովկասում՝ որպես տնտեսական զարգացման և ազատ շուկաների խթանման մեխանիզմներ:

Եզրակացություն

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ թեև ԵՄ-ը ԽՍՀՄ փլուզումից հետո անցած առաջին տասնամյակում Հարավային Կովկասի նշանակությունը գրեթե անտեսում էր, սակայն 2000-ական թվականները սկսած տարածաշրջանը հայտնվեց այդ կազմակերպության ռազմավարական հետաքրքրությունների շրջանակում: Դրա հիմնական դրսևորումներն են՝

1. ԵՄ-ի ընդլայնված էներգետիկ պահանջի և էլեկտրաէներգիայի ներկրումներից աճող կախվածության պատճառով Հարավային Կովկասի տարածաշրջանը ձեռք է բերել զգալի նշանակություն ԵՄ-ի էներգետիկ ներկրումների բազմազանեցման և էներգետիկ անվտանգության օրակարգում:
2. Էներգետիկ ռեսուրսների տիրապետելուց և տարանցիկ երթուղի լինելու ներուժից զատ Հարավային Կովկասը ԵՄ-ի

⁵⁸ Cornell S. and Starr F., ..., p. 17.

համար ունի զգալի նշանակություն նաև ավելի լայն տնտեսական առումով: Ռազմավարական առումով կարևոր տարածաշրջանային դիրքի շնորհիվ Հարավային Կովկասը համաշխարհային առևտրի կարևոր խաչմերուկ է, մասնավորապես՝ Եվրոպան կապելով Ասիայի հետ և ԵՄ-ի համար ստեղծելով հսկայական շուկա:

3. Քանզի Հարավային Կովկասը դարձել է ԵՄ-ի էներգետիկ անվտանգության օրակարգի էական բաղկացուցիչ, ԵՄ-ը սկսել է զգալիորեն կարևորել տարածաշրջանային անվտանգությունը և կայունությունը: ԵՄ-ը մեծապես հետաքրքրված է տարածաշրջանային հակամարտությունների հրատապ խաղաղ լուծմամբ՝ տարածաշրջանային անվտանգության ու կայունության ամրապնդման, էներգետիկ անվտանգության բարելավման և, ի վերջո, համապարփակ տարածաշրջանային համագործակցության հաստատման համար:
4. ԵՄ-ը հետաքրքրված է նաև պետության կառուցմանն աջակցության, արդյունավետ կառավարման խթանման, ինչպես նաև Հարավային Կովկասում ժողովրդավարական հաստատությունների համախմբման և զարգացման խնդիրներով՝ նպատակ ունենալով ոչ միայն ամրապնդել սեփական ժողովրդավարական երաշխիքները, այլև ապահովել կայունություն, տնտեսական զարգացում և ազատ շուկաների գոյություն:
5. Սկսած 2000-ականների սկզբից վերոնշյալ պատճառներով Բրյուսելը սկսեց ավելի ակտիվ քայլեր ձեռնարկել՝ տարածաշրջանի նկատմամբ համալիր ռազմավարության մշակման ուղղությամբ: Այդ նոր քաղաքականությունն ինստիտուցիոնալացվեց նախ Եվրոպական հարևանության քաղաքականության, ապա Արևելյան գործընկերության ծրագրերով:

**The EU's Strategic Interests in the South Caucasus:
from a Bystander to Perceived Interests**

NORA GEVORGYAN

Brusov State University of Languages and Social Sciences

The article discusses the main internal and external reasons of the increased importance of the South Caucasus region in the EU's political agenda in the early 2000s, as well as the primary motives of subsequent acknowledgment by the EU its strategic interests in the South Caucasus after the initial neglect towards the region. While examining the implications of the European energy security issues for the South Caucasus, the role of the region as a potential energy supplier and a transit route in the EU's gas import diversification strategy will be analyzed. This will be elucidated using an example of the "Southern Gas Corridor" project. Aside from the energy interests, following the article the EU's strategic interests in the fields of security, trade and good governance will be discussed.